ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- օգոստոսի 2026 թվականի №-Ա

«ԿԱՊԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №5 հավելվածով հաստատված ձևին համապատասխան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Հանձնաժողով է ներկայացվում յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 25-ը,

բ) «ԿԱՊԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի Հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2026 թվականի հուլիսի 29-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ 2026 թվականի հունիսի 17-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 17-ի № ՄՄ/34.2-Մ2-9/3212-2026 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջն, այն է՝ 2025 թվականի Հաշվետվությունը (և ուղեկցող գրությունը) Հանձնաժողով է ներկայացրել 2026 թվականի հուլիսի 29-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

զ) Ընկերությունը մինչև 2025 թվականի մայիսի 25-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №5 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2024 թվականի հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2025 թվականի սեպտեմբերի 30-ի №337-Ա որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել 2025 թվականի հոկտեմբերի 4-ին և անբողոքարկելի է դարձել 2025 թվականի դեկտեմբերի 5-ին, նախազգուշացրել է Ընկերությանը,

է) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կարգավորվող անձի կողմից կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ դրա գործողության դադարեցում, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով սահմանված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- օգոստոսի 2026 թ.